ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 2021թ.

Այցելեք spis.gov.pl կայք և ինքնագրվեք:
Մարդահամարը սկսվում է 2021 թվականի ապրիլի 1-ից:

Եթե դուք Ձեզ համարում եք ազգային կամ էթնիկ փոքրամասնությանը անդամ – ապա մի հապաղեք – մասնակցեք մարդահամարին

Հիշեք, ինչպես Լեհաստանի յուրաքանչյուր բնակիչ, դուք ևս պարտավոր եք.
– մտնել ինտերնետային spis.gov.pl կայք և ինքնուրույն գրանցվեք
– տալ ձեր ճշգրիտ տվյալները

Հարցեր ունե՞ք:
Հատուկ ձեզ համար 2021 թ. մարտի 15-ից բացվել է մարդահամարի թեժ գիծ՝ հեռ. համար – 22 279 99 99

Liczymy się
DLA POLSKI!

GUS | NSP 2021

Ցուցակագրման ընթացքում մենք ձեզ ապահովում ենք ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՓԱԹԵԹՈՎ

Ի՞ՆՉ ՕԳՈՒՏ ԿՈՒՆԵՆԱՔ

Մասնակցելով մարդահամարին և ներկայացնելով ձեր տվյալները `դուք ձեռք եք բերում հնարավորություն՝

– ստանալ բավարարվածությոան զգացում լավ կատարված քաղաքացիական պարտքից,
– շահել վիճակախաղի մրցանակներից մեկը:

Եվ ամենակարևորը, դուք ազդում եք՝

– մարդահամարի արդյունքների հիման վրա ձեր սոցիալական խմբի կարիքների համար լավագույն լուծումների պատրաստում,
– տվյալների հավաքում ազգային կամ էթնիկ փոքրամասնության մասին իրենց համայնքում, երկրում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Մարդահամարի ընթացքում ձեր տրամադրած տվյալները՝

– գաղտնի և օրինականորեն պաշտպանված են
– պահվում են սերվերում, որն օգտագործվում է միայն Կենտրոնական վիճակագրական վարչության կողմից:
– ապահովված ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով:

Հետազոտության ավարտից հետո տրամադրված տեղեկատվությունը ստանում է վիճակագրական տվյալների կարգավիճակ, պաշտպանված է և անհասանելի է չարտոնված անձանց համար: Տվյալների ոչ պատշաճ օգտագործումը պատժվում է ազատազրկմամբ:

ԲՈԼՈՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ՝

մարդահամարի ընթացքում մենք նույն տեղեկատվությունը խնդրում ենք Լեհաստանի յուրաքանչյուր բնակչից: Ձեր ապագան կերտելու եզակի հնարավորություն ունեք: Սկսեք այսօր ՝ պատասխանելով մարդահամարի հարցերին:

նշեք հարցերի պատասխանները.

Ինչ ազգության եք պատկանու՞մ:

Դուք ձեզ համարու՞մ եք այլ ազգի ներկայացուցիչ կամ էթնիկ համայնքի անդամ՝

ա) Այո (նշեք)

բ) Ոչ ՝ չեմ համարում

ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝

Դուք կարող եք ցուցակագրվել ձեզ համար հարմար վայրում և ձեզ հարմար պահի:

Օգնության կարիք ունե՞ք զանգահարեք թեժ գիծին - 22 279 99 99 ձեզ կօգնեն մեր հաշվարկողները:

ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ՝

Մարդահամարն ամենակարևոր վիճակագրական ուսումնասիրությունն է ոչ միայն Լեհաստանում, այլև ամբողջ աշխարհում: Մարդահամարի տվյալները ներկայացված են ամենաբարձր որակով, քանի որ դրանք համապատասխանում են հետևյալ պայմաններին՝

– ունիվերսալություն (ներառյալ բնակչություն և տնտեսություն),
– միաժամանակություն (այն ցույց են տալիս վիճակը տվյալ պահին),
– պարբերականություն (անցկացվում է յուրաքանչյուր 10 տարին մեկ):

Մարդահամարներն իրականացվում են Լեհաստանի իրավական ակտերի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների առաջարկությունների և ստանդարտների համաձայն, ինչպիսիքն են՝ ԵՄ-ն և ՄԱԿ-ը, ուստի տվյալների որակը հնարավորություն է տալիս միջազգային համեմատության:

GUS | NSP 2021